ԷԴՎԱՐԴ ՋՐԲԱՇՅԱՆ

Էդվարդ Մկրտի Ջրբաշյանը, որի ծննդյան 60-ամյակը բոլորեց վերջերս, համակողմանիորեն զարգացած, ներքին կարողություններով օժտված է տաղանդի ընդգծված անհատականությամբ գրականագետ է: Նուրջ երեք տասնամյա գիտական գործունեության ընթացքում նա ստեղծել է ըստ ծավալի և ըստ պրոբլեմային ընդգրկումների հարստության մի ծանրակշիռ ժառանգություն, որն իր ուրույն տեղն ունի հայ գրականագիտական-քննադատական մտքի պատմության մեջ:

«Գեղագիտություն և գրականություն» գրքի առաջաբանում իր «գիտական հետաքրքրությունների» ուղղությունը հատկացնելով հետազոտության «տեսական և գրական-պատմական կողմերի միասնությանը», Ջրբաշյանը գրում է. «Աշխատել ենք ցույց տալ գեղագիտական հասկացությունների կոնկրետ մարմնավորումը գրական իրողությունների մեջ և բացահայտել գրականության զարգացման պատմական օրինաչափությունները, սկզբունքները, որոնք մեր խորին համոզմամբ, նշում են ժամանակակից գրականագիտության ամենից արդյունավետ ուղիները»: Հիրավի, սա նրա ոլորտն է, նրա տեսական ու պատմական գիտելիքների փորձառական արհեստանոցը, կարծես կանխորոշված մի ունակություն, որ ի հայտ եկավ հենց առաջին «Պոետի ժամը սովետահայ գրականության մեջ» (1955 թ.) մենագրությունում, ուր ժանրի քննությունը դիտվում է զարգացման պատմական օրինաչափությունների և տեսական առանձնահատկությունների միասնության մեջ:

Առհասարակ մի ներքին տրամաբանվածություն կա Ջրբաշյանի անցած ճանապարհում, որ երևի գալիս է մտքի գիտական կարգապահությունից: Դա ամենից առաջ արտահայտվում է իր մասնագիտական կոչումն ըմբռնելու և այդ կոչմանը տիրապետելու մշտական ձգտման մեջ: Ըստ էության հենց դրանով էլ պետք է բացատրել ստեղծագործական պրոցեսի անընդհատությունն ու պրոբլեմների անընդմեջ հոսքը նրա հետազոտություններում: Եվ պատահական չէ, որ նրա ուսումնասիրություններում մի որոշակի շերտ են կազմում գրականագիտության մեթոդի և մեթոդոլոգիայի հարցերի լուսաբանությունը: «Արվեստի հարցերը Մարքսի և Էնգելսի աշխատություններում», «Լենինը և Տոլստոյի մասին», «Պլեխանովի էսթետիկական ժառանգությունը», «Ի՞նչ է նանաչում արվեստը», «Քնարական հերոսի մասին», «Վ. Ի. Լենինի «Փիլիսոփայական տետրերը» և գեղարվեստական պատկերի պրոբլեմը», «Վ. Գ. Բելինսկին գեղարվեստականության մասին» և այլ հոդվածներում ու ուսումնասիրություններում Ջրբաշյանը անդրադառնում է գրականագիտության գիտական հիմունքներին, օբյեկտիվ-գիտական չափանիշներով գծելով գեղարվեստական երկի վերլուծության և գրական-պատմական երևույթների մեկնաբանության մեթոդոլոգիական սկզբունքները: Այստեղ արդեն հայտնաբերվում են այն հիմունքները, որոնցով գրականագետը մոտենում է դասական գրողների կյանքի ու ստեղծագործության գնահատությանը: «Միսաք Մեծարենց», «Թումանյանի պոեմները», «Թումանյանի բալլադները», «Ռուբեն Սևակ» մենագրություններում, «Հայ գրականությունը XX դարի սկզբին», «Դարասկզբի հայ քնադատները» պատմական ներածություններում Ջրբաշյանը թե՛ գրողի գեղարվեստական աշխարհը է

թե՛ գրական-պատմական ընդհանուր իրողություններ ընելու է առնում պատմահասարակական հանգամանքների և գրական-գեղարվեստական օրինաչափությունները պայմանավորող գործոններով և դրանով իսկ գրականության մասին գիտությունը խարսխում օբյեկտիվ օրենքների ու չափանիշների վրա, բացառելով սուբյեկտիվ-տպավորական ընկալումները, վերացական տրամախոհությունները և արհեստական վերագրումները:

Ջրբաշյանի ուսումնասիրությունների ոճական համակարգը բաղադրվում է բնագրագիտական, փաստագրական, բանասիրական, նույնիսկ վիճակագրական ստուգաբանումներով: Ըստ Ենոյքին հենց այս հակումն է, որ նրա ուսումնասիրություններում ձև է տալիս դասական գրողների ստեղծագործության առանձնացված պրոբլեմների քննության ժանրային նախասիրությունը՝ «Զարենցը և Թումանյանը», «Գրական ոճավորման պրոբլեմը և Զարենցի սայաթնովյան տաղերը», «Եղիշե Զարենցը և Պուշկինի ժառանգությունը», «Անուշ» պոեմի կոմպոզիցիան», «Թմկաբերդի առումը» պոեմի ռիթմիկան», «Գաբրիել Սունդուկյանի միակ պատմվածքը» և այլն: Այս տեսանկյունից հատկապես ուշագրավ է «Ջորս գազար» (Թումանյան-Խաչատրյան-Տերյան-Զարենց) գիրքը, որի մեջ գետեղված հոդվածները, ինչպես հավաստում է հեղինակը, «պրոբլեմային բնույթի» են և նպատակ ունեն «նոր տեսանկյունից և հանախ առաջին անգամ օգտագործվող նյութերի հիման վրա... բացահայտելու հայ մեծ բանաստեղծների աշխարհայացքի և գեղարվեստական մեթոդի, նրանց գրական առնչությունների և վարպետության կարևորագույն կողմերը»:

Սակայն գրականության պատմությունը Ջրբաշյանի ընկալմամբ առանձին գրողների էմպիրիկ դասավորություն չէ: Այն իրականության գեղարվեստական ճանաչման դիալեկտիկական պրոցես է և ենթարկված է որոշակի օրենքների ու օրինաչափությունների: Գեղարվեստական կատեգորիաները, տերմինները, հասկացությունները վերացական արտահայտություններ չեն, այլ գիտության փորձով հաստատված սահմանումներ, որոնք ունեն խորապես պատմական բովանդակություն, և գրականագետի համոզմամբ պարզապես անհրաժեշտություն է վերլուծել գրողի ստեղծագործությունը կամ գրական այս կամ այն երևույթը առանց աշխարհայացքի, մեթոդի, ժանրի, ոճի և գեղարվեստական այլևայլ կատեգորիաների հստակ ըմբռնման: Այս իմաստով միանգամայն հատկանշական են պոետիկայի հարցերին նվիրված Ջրբաշյանի հոդվածները ու ուսումնասիրությունները, որոնք նրա գրականագիտական վաստակի մի խոշոր բաժին են կազմում և որոնց արժեքը գնահատելի է ամենից առաջ հայ գրականագիտության գիտականացման տեսակետից. «Գրականության և արվեստի այս կամ այն կողմի պոետիկայի ուսումնասիրությունը,— գրում է Ջրբաշյանը,— ենթադրում է հատկապես նրա գեղարվեստական յուրահատկության և գեղագիտական որակի բազմակողմանի բացահայտում: Պոետիկան հենց նշանակում է գեղարվեստական այն բոլոր միջոցների ամբողջական ընկալում և ուսումնասիրություն, որոնց շնորհիվ իրագործվում են արվեստի գեղագիտական էությունն ու արժեքը»:

Ինչպես տեսնում ենք, պոետիկա հասկացությունն այստեղ դիտված է լայն շրջագծի մեջ և ներառնում է գեղագիտական համակարգի ոլորտը իր ամբողջության մեջ՝ մեթոդ, ոճ, տաղաչափություն, ժանրի տեսություն և այլն: Պրոբլեմի ընդհանուր դրվածքում Ջրբաշյանին առավելապես զբաղեցրել են ժանրերի տեսության, տաղաչափության և գեղարվեստական մեթոդի հարցերը: Ժանրերի և մասնավորապես չափածո ժանրերի տեսության ու պատմության վերաբերյալ գրականագետի հոդվածներն ու ուսումնասիրությունները մի ամբողջ ցանկ են կազմում՝ «Գրական ժանրերի հիմնական չափանիշները», «Բելինսկին գրական ժանրերի զարգացման մասին», «Ժամանակակից պոեմի ուղիները», «Ժանրի տրադիցիաներ», «Բանաստեղծական էպոսի նոր ուղիները», «Դիդակտիկ պոեմները հայ գրականության մեջ», «Ավ. Իսահակյանի «Աբու-Լալա Մահարին» և ռոմանտիկական պոեմի ավանդույթները», «Ղևոնդ Ալիշանի «Երգք Նահապետի» բանաստեղծական շարքը և նրա գեղարվեստական միասնությունը», «Վահան Տերյանի բանաստեղծական շարքերը» և այլն: Արժե հատկապես առանձնացնել «Պոեմ և բալլադ» լավ մշակված ու բովանդակալից ուսումնասիրությունը, ուր պատմական լայն տեսադաշտի և համաշխարհային գրականության գեղարվեստական փորձի զուգահեռների վրա լուսաբանվում են ժանրային այդ տարատեսակների պատմական ուղիները ու պոետիկական «դիմանկարները»:

«Գիտական կոնցեպցիաները,— գրում է Ջրբաշյանը,— լինելով ճշմարտության մերձենալու աստիճաններ, միաժամանակ գիտության զարգացման որոշակի մակարդակի և խնդիրների արտացոլումն են: Հետևաբար, նրանք ենթակա են հաջորդ սերունդների վերանայմանը և ճշտմանը»: Առնասարակ իր գիտական ոճին յուրահատուկ այս մեկնակետը առավելապես վերաբերում է «վեզու ե ոտանավոր» մեծարժեք ուսումնասիրությանը, որը նվիրված է հայկական տաղաչափությանը: Հանրագումարի բերելով տաղաչափության վերաբերյալ տեսական մտքի գլխավոր արդյունքները է ճնշական հայացքի տակ առնելով հայ տաղաչափական գիտության պատմական ուղին՝ հերականներից մինչև Աբեղյան, գրականագետը սկզբունքային վերանայումներ է կատարում հարցի արդի դրվածքում, հաստատելով հայկական տաղաչափության վանկային հիմունքը: Այսպիսով, գրականագետը առաջադրում է հայկական ոտանավորի տեսության, որ նույնն է թե հայ բանաստեղծության տաղաչափական համակարգի նոր վերակառուցում, ըստ այդմ, որպես մեթոդոլոգիական ուղեցույց նշելով տաղաչափության հետազոտության երեք հիմնական տեսանետ, նախ՝ տաղաչափության ուսումնասիրություն՝ ազգային պոեզիայի կառուցվածքի հիմնական ձևերի գիտական նկարագրության հիմքի վրա, երկրորդ՝ տաղաչափական ձևերի վերլուծություն՝ պատմական զարգացման պրոցեսի մեջ, վերջապես՝ տաղաչափական իրողությունների ճնություն՝ բանաստեղծական երկի ընդհանուր վերլուծության համակարգում:

Գեղարվեստական մեթոդի ճնությունը պոետիկայի ընդհանուր համակարգում Ջրբաշյանի համար միանգամայն հասկանալի իրողություն է: «Պայմանավորված լինելով պատմական դարաշրջանով և արվեստագետի աշխարհայացքով,— գրում է նա,— գեղարվեստական մեթոդն իր ներքին պայմանավորում և «կառավարում» է նրա ստեղծագործական ոճը, պատկերման ձևերի ու միջոցների ընտրությունը»: «Գեղարվեստական մեթոդի էությունը» տեսական աշխատության մեջ գրականագետը հասկացության գիտակցման պրոցեսի մեջ դիտելով գեղարվեստական մեթոդի ըմբռնումը, բացահայտում է այդ կատեգորիայի, որպես իրականության հանաչման համակարգի պատմական ու սիստեմատիկական ինքնակայությունը: Բայց գեղարվեստական «մեթոդների, ուղղությունների, հոսանքների և ոճերի առաջացման ու զարգացման գիտական օրինաչափությունների» հարցը միայն տեսական հարց չէ, այլ նաև գրական-պատմական, առանց ուի անիմաստ է դատել գրականության գիտական պատմության, նրա պարբերացման սկզբունքների ու զարգացման օրինաչափությունների մասին:

Պրոբլեմի յուսաբանման ուղղությամբ որոշակի ներդրում ունեցավ Ջրբաշյանը: Դասական գրողների, ժանրերի պատմության, առանձին գրական երևույթների վերաբերյալ մենագրություններում ու ուսումնասիրություններում, բազմաթիվ հոդվածներում ու պատմագրական ակնարկներում («Շիրվանզադեի պայքարը ռեալիզմի համար», «Ավ. Իսահակյանի «Արու-Լալա Մահարին» և ռոմանտիկական պոեմի ավանդույթները», «Թումանյանի ռեալիզմը», «Հայ գրականությունը XX դարի սկզբին», «Ընդհանուրը և առանձնահատուկը հայ գրականության դասական ուղղություններում» և այլն) գրականագետը մեթոդոլոգիական նորագույն սկզբունքների տեսակետից վերանայում է հայ գրականության պատմության զարգացման օրինաչափությունների վերաբերյալ կանխակալ մոտեցումները ու հասարակացված ըմբռնումները և առաջադրում գրական դպրոցների, մեթոդների, ուղղությունների ու հոսանքների (կլասիցիզմ, ռոմանտիզմ, ռեալիզմ) ծագումնաբանության, պատմական ու ազգային առանձնահատկությունների և համաշխարհային առնչությունների գիտական հիմնավոր մեկնաբանություններ:

Առանց չափազանցության կարելի է ասել, որ հայ գրականագիտության մեջ տեսական-մասնագիտական ուղղություն ստեղծելու գործում Ջրբաշյանը միանգամայն առանձնահատուկ ավանդ ունի: Դեղագիտական կատեգորիաները ընդհանուր-համամարդկային են և, իհարկե, ազգային գրականության տեսություն հասկացությունը զուրկ է պարագայական իմաստից: Եվ սակայն նրա ազգային տարբերակը հավանականություն ունի ոչ միայն կիրառական, այլև իմացական տեսանկետից՝ ինչպես ազգային գեղարվեստական փորձի տրանսֆորմացիայի ձևով: Այս իմաստով մեր գրականագիտության մեջ մի ուշագրավ երևույթ է նրա «Գրականության տեսություն» ձեռնարկը: Ինքնին նորույթ է այն փաստը, որ Ջրբաշյանն ստեղծել է գրականության տեսության իր տարբերակը՝ ոչ միայն գեղագիտական կատեգորիաների ընդհանուր-նորմատիվ օրենքների մեջ ներառնելով հայ գրականության փորձը, այլև առարկայի կառուցվածքային ուսումնասիրությունն

ընդլայնելով մի քանի կական պրոբլեմների հանգամանալից լուսաբանությամբ (գեղարվեստականության շափանիշներ, գրականության գեղագիտական բնույթը և այլն)։

Մենք փորձեցինք ընդհանուր գծերով բնութագրել Ջրբաշյանի գրականագիտական վաստակը իր գլխավոր ուղղություններով, որոնց ներքին օղակներն, իհարկե, կարելի է լրացնել դասական և ժամանակակից գրականության, հայ և համաշխարհային գրական առնչությունների, գեղարվեստական ձևի և վարպետության, ինչպես նաև այլևայլ պրոբլեմների վերաբերյալ գրախոսություններով, հոդվածներով, հետազոտություններով։ Եվ սակայն այդ ամենը բերի կլիներ առանց գրական-գիտական մտքի ղեկավարման այն արգասավոր աշխատանքի, որ իր գործունեության ընթացքում կատարել է Ջրբաշյանը որպես համալսարանի դասախոս և ամբիոնի վարիչ, ասպիրանտների ղեկավար, «Գրական բերքի», «Սովետական գրականություն» ամսագրի. «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի խմբագիր, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի բաժնի վարիչ և այժմ արդեն նույն ինստիտուտի տնօրեն։

Հայտնի նշմարտություն է՝ նա ով անցյալ ունի, ունի նաև ապագա։ Եվ համոզված ենք, որ ակադեմիկոս Ջրբաշյանի ստեղծագործական հնարավորությունները հայ գրականագիտությունը հարստացնեն նորանոր հետազոտություններով։

Բանասիր. գիտ դոկտոր Ս. Ն. ՍԱՐԻՆՅԱՆ